ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 01.08.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/23

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Խաչպար» ՍՊԸ-ի 13.07.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Խաչպար» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 13.07.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարել է «ԳՀԱՊՁԲ-2017/15-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, 21 չափաբաժիններով, որոնցից թիվ 15-ից մինչև թիվ 21-րդ չափաբաժիններում նշված ապրանքները ախտահանիչ միջոցներ են: Այդ ապրանքների տեխնիկական բնութագրերի հատկանիշները ներկայացված են հրավերի պայմանագրի հավելված թիվ 1՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի տեխնիկական բնութագիրը համապատասխան սյունակում, որոնք նույն հատկանիշներն են, ինչը որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը 2017թ. մարտի 1-ի որոշումով հայտարարված քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017»

(ԵՊԲՀ) ծածկագրով մրցույթի հրավերի թիվ 1-ից մինչև 7-րդ չափաբաժիններում ֆրանսիական Անիոս ֆիրմայի արտադրության բրենդային անվանումներով նշված ապրանքների տեխնիկական բնութագիրը սյունակներում առկա հատկանիշները:

Ընկերությունը նշել է, որ 2017թ. ապրիլի 5-ին «Խաչպար» ՍՊԸ-ն բողոքարկել է «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017» (ԵՊԲՀ) ծածկագրով մրցույթի հրավերի թիվ 1-ից մինչև 7-րդ չափաբաժինների մասով՝ նշելով, որ գնման առարկաների տեխնիկական բնութագրերը խտրական հիմունքներով են կազմված, որոնք չհիմնավորված խոչընդոտներ են առաջացնում և մրցակցության համար հավասար պայմաններ չեն ապահովում: Բողոքի (ԳԲԽ-42/17) վերաբերյալ որոշումը կայացվել է 2017թ. ապրիլի 21-ին, որով բավարարվել է Ընկերության բողոքը: ԳԲԽ-42/17 որոշման հիման վրա «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017» (ԵՊԲՀ) ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը նույն օրը՝ ապրիլի 21-ին, ժամը 17:00 նիստ է հրավիրել և որոշել է ընթացակարգի 1-ից մինչև 7-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած:

Ընկերությունը նշել է նաև, որ 2017թ. ապրիլի 21-ին, ժամը 18:34-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը հայտարարել է «ՇՀԱՊՁԲ-15/15-5-2017(ԵՊԲՀ)» ծածկագրով մրցույթը թվով 1-7 չափաբաժիններով, որոնք նույն ախտահանիչ միջոցներն են, ինչ-որ պահանջվել էր Պատվիրատուի 2017թ. մարտի 9-ի՝ «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017(ԵՊԲՀ)» ծածկագրով մրցույթի թիվ 1-ից 7-րդ չափաբաժիններում, միայն այն տարբերությամբ, որ տվյալ նոր հրավերի «Անվանումը» սյունակում Պատվիրատուն չի գրել «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017(ԵՊԲՀ)» հրավերի՝ միայն արտադրող ֆրանսիական «Անիոս» ֆիրմայի՝ տվյալ նյութերի բրենդային անվանումները՝ նրանց կից «կամ համարժեք» բառերի հետ միասին, այլ «Տեխնիկական բնութագիրը» սյունակից անջատել է այդ միջոցների կիրառման և նշանակության մասին գրված տեղեկատվությունները և դրանք անվանումների փոխարեն տեղադրել է «Անվանումը» սյունակում, իսկ գնման առարկաների «Տեխնիկական բնութագիրը» սյունակում անփոփոխ է թողել այդ ֆիրմայի՝ բրենդային անվանումներն ունեցող ախտահանիչ միջոցների կոնկրետ թվային, տոկոսային, ծավալային մեծությունները, որոնք չեն հանդիպում այլ արտադրող ֆիրմաների համարժեք միջոցների մոտ, խտրական պայմաններ են ստեղծում, չհիմնավորված խոչընդոտներ են առաջացնում և մրցակցության համար հավասար պայմաններ չեն ապահովում, որի պատճառով էլ եղել էր «Խաչպար» ՍՊԸ-ի ԳԲԽ-42/17 բողոքը:

Ընկերությունը տեղեկացրել է, որ ապրիլի 27-ին ահազանգել է ՀՀ Ֆինանսների նախարարության թեժ գծին՝ խնդրելով վերջինիս միջամտությունը՝ «Պատվիրատուի կողմից վերոնշյալ խախտումները շտկելու նպատակով «ՇՀԱՊՁԲ-15/15-5-2017(ԵՊԲՀ)» ծածկագրով հրավերի թիվ 1-ից 7-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում անհրաժեշտ փոփոխությունները կատարելու և այդ մասին սահմանված կարգով հայտարարություն հրապարակելու համար: Ընկերությունը ի պատասխան ստացել է՝ ՀՀ ՖՆ 03/73-3/7419-17 2017-04-28 գրությունը, որով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին հանձնարարվել է «ՇՀԱՊՁԲ-15/15-5-2017(ԵՊԲՀ)» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած և կազմակերպել Օրենքով նախատեսված գնման նոր մրցակցային ընթացակարգ:

Ընկերությունը նշել է, որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից ներկայացված գրությունում առկա մի քանի պահանջներից կատարել է միայն մեկը՝ «ՇՀԱՊՁԲ-15/15-5-2017(ԵՊԲՀ)» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասով, որից հետո՝ 2017թ. հուլիսի 7-ին հայտարարել, իսկ 2017թ. հուլիսի 10-ին հրապարակել է գնանշման հարցման հրավեր «ԳՀԱՊՁԲ-2017/15-1-ԵՊԲՀ» ծածկագրով, որտեղ չի կատարել ՀՀ ֆինանսների նախարարության պահանջներից մյուսը՝ հաշվի չի առնվել «Խաչպար» ՍՊԸ-ի ահազանգով բարձրացված խնդիրը՝ գնման առարկաների տեխնիկական բնութագրերը խտրական հիմունքներով կազմված լինելու մասով, որից հետո Ընկերությունը նորից ահազանգել է ՀՀ ֆինանսների նախարարության թեժ գծին:

Ընկերությունը որպես ներկայացված բողոքի փաստացի և իրավական հիմք ներկայացրել է հետևյալը.

«Պատվիրատուի կողմից գնման առարկաների բնութագրերը կազմվել են հիմք ընդունելով ախտանիշ միջոցներ արտադրող ֆրանսիական «Անիոս» ֆիրմայի բրենդային անվանումներ ունեցող կոնկրետ արտադրանքները բնութագրող այնպիսի կոնկրետ տոկոսներ, կշռաչափեր, ծավալի և ազդող նյութերի այնպիսի թվեր, որոնք պատկանում են միայն ու միայն կոնկրետ այդ արտադրողի՝ տվյալ բրենդային անվանումներով ախտահանիչ միջոցներին, չեն հանդիպում ոչ մի այլ արտադրողի համանման և համարժեք ախտահանիչ միջոցների մոտ, ինչն ապացուցվել է Ընկերության ԳԲԽ-42/17 բողոքի քննարկման ժամանակ և հիմք է հանդիսացել բավարարման համար:

Պատվիրատուի կողմից կոնկրետ արտադրողի գնման առարկաների հատկանիշները նկարագրելու պարագայում «կամ համարժեք» բառերը չգրելը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջին:

Պատվիրատուի կողմից գնման առարկաների բնութագրերը նման ձևով կազմելը հանգեցնում է չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը և մրցակցության հավասար պայմաններ չի ապահովում մասնակիցների համար, ինչը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջներին:

Պատվիրատուի կողմից գնանշման հարցման ընթացակարգը կազմակերպվել է խտրական հիմունքներով, ինչը չի նպաստում պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և նրանց միջև մրցակցության խրախուսմանը, հակասելով ՀՀ «Գնումների մասին» Օրենքի թիվ 3 հոդվածի թիվ 2-րդ մասի թիվ 1 և 2 կետերի պահանջներին:

Պատվիրատուն «ԳՀԱՊՁԲ-2017/15-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հայտարարության մեջ նշել է, որ այն կազմվել է համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության 2017թ. մայիսի 24-ի N 237-Ա հրամանի Հավելված թիվ 1՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի թիվ 15–ից 21-րդ չափաբաժինների մասով, թույլ է տվել այդ հրամանի պահանջների խախտում՝ 3-րդ սյունակում պահանջվող՝ ապրանքի «անվանումը և ապրանքային նշանը» գրելու փոխարեն գրել է 2017թ. մարտի 9-ին հայտարարված «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017(ԵՊԲՀ)» ծածկագրով մրցույթի հրավերի թիվ 1-ց 7-րդ չափաբաժինների Հավելված 1-ի «Տեխնիկական բնութագիր» սյունակներում առկա՝ բրենդային անվանումներով նշված ախտահանիչ միջոցների կիրառման ոլորտների նկարագրությունը:»:

Ընկերությունը ի լրումն բողոքում նշված հիմքերի, գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«2017թ. հուլիսի 18-ին ԳԲԽ-ԷՍ-2017/23 բողոքի քննարկման ժամանակ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացուցչի կողմից բողոքը քննող հանձնաժողովին առձեռն հանձնված ԵՊԲՀ-ի 18.07.2017թ. թիվ 1190 գրությունում առկա՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի տարբեր հոդվածների տարբեր կետերին արված հղումներն ու բացատրությունները: ԳԲԽ-42/17 որոշման մեկնաբանությունը կամ բոլորովին կապ չունի Ընկերության բողոքում նշվածների և ԳԲԽ-42/17 որոշման 25 էջանոց հիմնավորումների և ապացույցների հետ, կամ էլ միտված է թաքցնելու Պատվիրատուի կողմից ՀՀ ֆինանսների նախարարության

2017թ. մայիսի 24-ի N 237-Ա հրամանի, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի տարբեր հոդվածների պահանջները չկատարել հետ:

Վերոգրյալը հիմնավորվում է հետևյալ փաստերով՝

ա) Պատվիրատուն իր գրության 2-րդ էջում հղում է կատարել «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասին այն դեպքում, երբ բողոքի փաստացի և իրավական հիմքերի գ) կետում նշված է Օրենքի 3 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջների խախտման մասին, որոնց ոչ մի անդրադարձ չկա գրությունում:

բ) Պատվիրատուն իր գրության 2-րդ էջում հղում է կատարել «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասին, 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերին և 3-րդ մասին, այն դեպքում, երբ բողոքի փաստացի և իրավական հիմքերի բ) կետում նշված է Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջների խախտման մասին, որոնց ոչ մի անդրադարձ չկա գրությունում:

գ) Պատվիրատուն իր գրության 2-րդ էջում նշել է, որ ընթացակարգի հրավերում գրված են սահմանված անվանումներ, այն դեպքում, երբ բողոքի փաստացի և իրավական հիմքերի դ) կետում նշված է ՀՀ ֆինանսների նախարարության 2017թ. մայիսի 24-ի N 237-Ա հրամանի Հավելված թիվ 1՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի 3-րդ սյունակում պահանջվող՝ ապրանքի «անվանումը և ապրանքային նշանը» գրելու փոխարեն Պատվիրատուն թիվ 15-ից 21-րդ չափաբաժինների մասով գրել է 2017թ. մարտի 9-ին իր իսկ կողմից հայտարարված և 2017թ. ապրիլի 21-ին ԳԲԽ-42/17 որոշումով դադարեցված «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017-ՀՄ-ԵՊԲՀ» ծածկագրով մրցույթի հրավերի թիվ 1-ից 7-րդ չափաբաժինների Հավելված 1-ի «Տեխնիկական բնութագիր» սյունակներում առկա՝ բրենդային անվանումներով նշված ախտահանիչ միջոցների կիրառման ոլորտների նկարագրությունը, որոնց ոչ մի անդրադարձ չկա գրությունում:

դ) Պատվիրատուն իր գրության 2-րդ և 4-րդ էջերում նշել է, որ ընթացակարգի հրավերում տեխնիկական բնութագրերի մասով Ընկերությունը բացի հայտարարությունից չի ներկայացրել հիմնավորող որևէ իրավական հիմք կամ ապացույց:

Ընկերությունը, որպես ապացույց այն մասին, որ Պատվիրատուի կողմից «ԳՀԱՊՁԲ-2017/15-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 15-ից 21-րդ չափաբաժիններում նշված ապրանքների բնութագրերը կազմվել են հիմք ընդունելով ախտանիչ միջոցներ արտադրող ֆրանսիական «Անիոս» ֆիրմայի բրենդային

անվանումներ ունեցող կոնկրետ արտադրանքները բնութագրող այնպիսի կոնկրետ տոկոսներ, կշռաչափեր, ծավալի և ազդող նյութերի այնպիսի թվեր, որոնք պատկանում են միայն ու միայն կոնկրետ այդ արտադրողի՝ տվյալ բրենդային անվանումներով ախտահանիչ միջոցներին, ներկայացրել է հետևյալը.

1) ՀՀ ԱՆ 2013թ. սեպտեմբերի 28-ի թիվ 2594-Ա հրամանը՝ ֆրանսիական «Անիոս» ընկերության արտադրած ախտահանիչ միջոցների՝ թվով 8 հատ, կիրառման մեթոդական հրահանգների հաստատման մասին, այդ ցանկից Պատվիրատուի հրավերի 15-րդ չափաբաժնի տեխնիկական հատկանիշներին համապատասխանող՝ հրահանգ թիվ 7-րդ՝ «Անիոզիմ ԴԴ1»-ի, Պատվիրատուի հրավերի 16-րդ չափաբաժնի տեխնիկական հատկանիշներին համապատասխանող՝ հրահանգ թիվ 5-րդ՝ «Հեքսանիոս Գ+Ռ»-ի, Պատվիրատուի հրավերի 17-րդ չափաբաժնի տեխնիկական հատկանիշներին համապատասխանող՝ հրահանգ թիվ 8-րդ՝ «Անիոսժել»-ի, Պատվիրատուի հրավերի 18-րդ չափաբաժնի տեխնիկական հատկանիշներին համապատասխանող՝ հրահանգ թիվ 4-րդ՝ «Ստերանիոս 20% խտացված»-ի, Պատվիրատուի հրավերի 19-րդ չափաբաժնի տեխնիկական հատկանիշներին համապատասխանող՝ հրահանգ թիվ 2-րդ՝ «Սուրֆանիոս»-ի,

2) ՀՀ ԱՆ 2017թ. ապրիլի 4-ի թիվ 1095-Ա հրամանը՝ ֆրանսիական «Անիոս» կազմակերպության «Սուրֆանիոս», «Հեքսանիոս Գ+Ռ», «Անիոքսիդ 1000», «Անիոզիմ ԴԴ1», «Անիոսժել 85 ՆՊՍ» ախտահանիչ միջոցների մեթոդական հրահանգները հաստատելու մասին 2594-Ա հրամանում փոփոխություններ կատարելու մասին, որտեղ կատարված փոփոխություններն ամբողջությամբ համընկնում են Պատվիրատուի «ԳՀԱՊՁԲ-2017/15-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 15-ից մինչև 19-րդ չափաբաժիններում նշված ապրանքների բնութագրերի հատկանիշներին:

3) Պատվիրատուի «ԳՀԱՊՁԲ-2017/15-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերի թիվ 20 և 21-րդ չափաբաժիններում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերն ամբողջությամբ համապատասխանում են «Անիոս» ֆիրմայի արտադրության «Սուրֆասեյֆ Պրեմիում» և «Անիոսեյֆ Սավոն Դու» նյութերին, որոնց մասին Ընկերությունը պաշտոնական տեղեկատվություն չունի, առկա են միայն ինտերնետից վերցված ինֆորմացիաները, որոնք հաստատվում են Պատվիրատուի՝ 2017թ. մարտի 9-ի «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017-ՀՄ-ԵՊԲՀ» ծածկագրով մրցույթի հրավերի թիվ 6-րդ և 7-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերի և 2017թ. հուլիսի 7-ի «ԳՀԱՊՁԲ-2017/15-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերի թիվ 20-րդ և

21-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերի հատկանիշներն իրար հետ համադրելուց հետո:

ե) Պատվիրատուն իր գրության 3-րդ էջում նշել է, որ ընթացակարգի գնման առարկաների տեխնիկական բնութագրերը չեն հակասում Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերին, վերոգրյալ դ) կետով ապացուցվեց, որ Պատվիրատուի «ԳՀԱՊՁԲ-2017/15-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերի թիվ 15, 16, 17, 18, 19, 20 և 21 չափաբաժինների տեխնիկական բնութագրերի հատկանիշները ամբողջությամբ համընկնում են միայն ֆրանսիական «Անիոս» ֆիրմայի բրենդային անվանումներով նյութերի հատկանիշներին, որոնք մրցակցության հավասար պայմաններ չեն ապահովում այլ արտադրողների համարժեք նյութեր առաջարկող հնարավոր մասնակիցների համար, հանգեցնում են գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, ինչը արգելվում է Օրենքով:

զ) Պատվիրատուն իր գրության 3-րդ էջում նշել է, որ ընթացակարգի գնման առարկաների տեխնիկական բնութագրերը չեն հակասում Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասին, վերոգրյալ դ) կետով ապացուցվեց, որ Պատվիրատուի «ԳՀԱՊՁԲ-2017/15-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերի թիվ 15, 16, 17, 18, 19, 20 և 21 չափաբաժինների տեխնիկական բնութագրերի հատկանիշները ամբողջությամբ համընկնում են միայն ֆրանսիական «Անիոս» ֆիրմայի բրենդային անվանումներով նյութերի հատկանիշներին, այսինքն՝ հղումներ են պարունակում կոնկրետ արտադրողի կոնկրետ անվանում ունեցող առևտրային նշանով ապրանքին, այլ ոչ թե հակառակը, ինչպես պնդում է Պատվիրատուն իր գրության մեջ, ուստի Օրենքով պահանջվում է գրել «կամ համարժեք» բառերը, ինչը չի կատարվել Պատվիրատուի կողմից:

է) Պատվիրատուն իր գրության 4-րդ էջում նշել է, որ ՀՀ ԳԲԽ-42/17 որոշման մեջ ևս բացակայում են ապացույցներ:

Ընկերությունը հայտնել է, որ ԳԲԽ-42/17 բողոքը քննող հանձնաժողովը իր 25 թերթանոց որոշման մեջ մանրակրկիտ քննել է կողմերի բերած փաստերն ու փաստարկները, հաշվի է առել ներկայացված իրավական ակտերում առկա բոլոր նրբությունները, ինչպես նաև «ԳԱԿ» ՊՈԱԿ-ի կարծիքը և կայացրել է իրավապարտադիր որոշում, որի հետ, եթե Պատվիրատուն համաձայն չէ, ապա պետք է այն բողոքարկի դատական կարգով, այլ ոչ թե ԵՊԲՀ-ի հարգին անհարիր մերկապարանոց հայտարարություններ անի:

Ընկերությունը ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի բ. ենթակետով, խնդրել է չկայացած հայտարարել «ԳՀԱՊՁԲ-2017/15-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

Խորհրդում բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն՝ Սմբատ Բալասանյանը:

2. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 18.07.2017թ. թիվ 1190 գրությամբ Խորհրդին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

««Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 13.07.2017թ. ներկայացված բողոքով նշված հայտարարությունները ընդունելի չեն, քանի որ համալսարանի կողմից 10.07.2017թ. հայտարարված և հրապարակված «ԳՀԱՊՁԲ-2017/15-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը հրապարակվել է՝ պահպանելով գործող գնումների մասին ՀՀ օրենքի պահանջները, իսկ հրավերի գնման առարկաների տեխնիկական բնութագրերը կազմված են նույն օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան:

«Խաչպար» ՍՊԸ-ն նշել է, որ ընթացակարգը հայտարարվել է 07.07.2017թ., իսկ հրապարակվել է 10.07.2017թ.: «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը, քանի որ «ԳՀԱՊՁԲ-2017/15-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվել է, ինչպես նաև /gnumner.am/ կայքում հրապարակվել է 10.07.2017թ, իսկ 07.07.2017թ. «ԳՀԱՊՁԲ-2017/15-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ հաստատվել է հրավերի տեքստը:

Համալսարանական հիվանդանոցների աշխատանքները կազմակերպելու համար պահանջվող քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով 2017թ. հուլիսի 10-ին հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-2017/15-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգ, և անընդունելի է հայտարարված ընթացակարգի համեմատումը նախկինում հայտարարված որևէ այլ ընթացակարգի հետ: «Խաչպար» ՍՊԸ-ն որպես ապացույց ներկայացրել է Համալսարանի կողմից հրապարակված «ԳՀԱՊՁԲ-2017/15-1-ԵՊԲՀ»

ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի գնման առարկաների անվանումները և տեխնիկական բնութագրերը, գնման առարկաների անվանումը և ապրանքային նշանը սյունակում ձեռագիր ավելացրել է բրենդային անվանումներ և հայտնել, որ Համալսարանը չի կիրառել «կամ համարժեք» արտահայտությունը, ինչպես նաև ներկայացրել է «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի գնման առարկաների տեխնիկական բնութագրերը: Ճշգրիտ համեմատելով երկու ընթացակարգերի հրավերների տեխնիկական բնութագրերը, պարզ երևում է, որ «ԳՀԱՊՁԲ-2017/15-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի անվանումները և տեխնիկական բնութագրերը բավականին տարբերվում են «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի անվանումներից և տեխնիկական բնութագրերից:

«ԳՀԱՊՁԲ-2017/15-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնման առարկաների տեխնիկական բնութագրերը հիմնավորված են օբյեկտիվորեն և համարժեք են այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը, կազմվել են գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, 13-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերի և 3-րդ մասի հիման վրա: Վերոգրյալը հիմնավորվում է ընթացակարգի հրավերով սահմանված անվանումներով և տեխնիկական բնութագրերով, և «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից չի ներկայայցվել հակառակը ապացուցող որևէ իրավական հիմք:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- Հոդված 13. Գնման առարկայի բնութագրերը.

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

• Հոդված 3. 1-ին մաս.

Նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ:

«ԳՀԱՊՁԲ-2017/15-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնման առարկաների տեխնիկական բնութագրերը չեն հակասում նույն օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերին, ինչպես նաև 5-րդ մասին:

• Հոդված 13. Գնման առարկայի բնութագրերը.

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:»:

Վերոգրյալի վերաբերյալ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հետևյալ տեղեկատվությունը՝ «Պատվիրատուի կողմից գնման առարկաների բնութագրերը կազմվել են հիմք ընդունելով ախտահանիչ միջոցներ արտադրող Ֆրանսիական «Անիոս»

ֆիրմայի բրենդային անվանումներ ունեցող կոնկրետ արտադրանքները բնութագրող այնպիսի կոնկրետ տոկոսներ, կշռաչափեր, ծավալի և ազդող նյութերի այնպիսի թվեր, որոնք պատկանում են միայն ու միայն կոնկրետ այդ արտադրողի՝ տվյալ բրենդային անվանումներով ախտահանիչ միջոցներին, չեն հանդիպում ոչ մի այլ արտադրողի համանման և համարժեք ախտահանիչ միջոցների մոտ, ինչը ապացուցվել է «Խաչպար» ՍՊԸ-ի ԳԲԽ-42/17 բողոքի քննարկման ժամանակ և հիմք է հանդիսացել Խաչպար» ՍՊԸ-ի ԳԲԽ-42/17 բողոքի բավարարման համար:»:

«Խաչպար» ՍՊԸ-ն բացի ներկայացված հայտարարությունից չի ներկայացրել իր հայտարարությունը հիմնավորող որևէ ապացույց: Նմանատիպ ապացույցը բացակայում է նաև ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-42/17 որոշման մեջ:

«ԳՀԱՊՁԲ-2017/15-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի անվանումները և տեխնիկական բնութագրերը չեն պարունակում որևէ հղում առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, ինչի հետևանքով և չի կիրառվել «կամ համարժեք» արտահայտությունը: Որոշ գնման առարկաների տեխնիկական բնութագրերում ապրանքների որակական ցուցանիշները լրացուցիչ բնութագրելու համար պահանջվել է համապատասխան արտոնագրերի առկայություն, և Պատվիրատուն գտնում է, որ քանի որ անհնար է գնման առարկաների բնութագրումն առանց դրանց, համապատասխան արտոնագրերի համար կիրառվել է «կամ համարժեք» արտահայտությունը, որը պարզ երևում է, որ կիրառելի է միայն պահանջվող արտոնագրերի մասով:

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից նշվել է, որ Համալսարանը ՀՀ ՖՆ 03/73-3/7419-17 գրությունում առկա «ՇՀԱՊՁԲ-15/15-5-2017-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող մի քանի պահանջներից կատարել է միայն մեկը: ՀՀ ՖՆ 03/73-3/7419-17 գրությունում առկա պահանջն է եղել՝ չեղյալ հայտարարել «ՇՀԱՊՁԲ-15/15-5-2017-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգը, քանի որ ընթացակարգի հրավերը հայտարարվել էր 21.04.2017թ., իսկ հրապարակվել 25.04.2017թ., և հաշվի առնելով, որ 25.04.2017թ. սկսած Պատվիրատուներն իրավասու չէին հրապարակել շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգ, Համալսարանի կողմից «ՇՀԱՊՁԲ-15/15-5-2017-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած, ինչով իսկ կատարվել է ՀՀ ՖՆ 03/73-3/7419-17 գրությամբ նշված պահանջը:»:

Պատվիրատուն հաշվի առնելով վերոգրյալը, հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2017/15-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի օրինականությունը, ինչպես նաև «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված չհիմնավորված հայտարարությունները, խնդրել է մերժել «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքը:

Պատվիրատուն՝ ի լրումն 18.07.2017թ. թիվ 1190 գրության, Խորհրդին է ներկայացրել «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 13.07.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքին վերաբերող լրացուցիչ հիմնավորումներ.

«Կից ներկայացնում ենք ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեդոդական հրահանգը ՀՀ տարածքում արտադրվող ախտահանիչ նյութերի տեխնիկական համապատասխանության վերաբերյալ: Հրահանգը ներկայացվում է համապատասխան նշումներով, որոնք հերքում են «Խաչպար» ՍՊԸ-ի հայտարարությունն այն մասին, որ «ԳՀԱՊՁԲ-2017/15-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագերը պատկանում են միայն և միայն ֆրանսիական «Անիոս» ֆիրմայի արտադրության ախտահանիչ նյութերին, և ոչ մի այլ արտադրողի ախտահանիչ նյութերը չեն բավարարում հրավերով սահմանված պահանջներին:»:

Խորհրդում բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի՝ գնումների բաժնի պետ՝ Ռուբեն Ենգոյանը:

<u>3. ԳԲԽ-ԷՍ-2017/23 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուդն ուսումնասիրել է «Խաչպար» (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՍՊԸ-ի կողմից 13.07.2017թ. ներկայացրած բողոքը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Խորհրդին ներկայացված 18.07.2017թ. թիվ 1190 և 19.07.2017թ. թիվ 1191 գրությունները, «ԳՀԱՊՁԲ-2017/15-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, Գնումների բողոքարկման խորհրդի 21.04.2017թ. թիվ 42/17 որոշումը, Պատվիրատուի և «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած դիրքորոշումները և կարծիքները.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարել է «ԳՀԱՊՁԲ-2017/15-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ ընթացակարգ):

«Խաչպար» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով հայտնել է, որ հայտարարված ընթացակարգի 15-ից 21-րդ չափաբաժիններում նշված ապրանքները ախտահանիչ միջոցներ են և այդ ապրանքների տեխնիկական բնութագրերի հատկանիշները ներկայացված են հրավերի պայմանագրի թիվ 1 հավելվածում՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի «Ապրանքի տեխնիկական բնութագիրը» սյունակում:

Ընկերությունը հայտնել է նաև, որը ընթացակարգի 15-ից 21-րդ չափաբաժիններում նշված ապրանքների հատկանիշները նույնն են Պատվիրատուի կողմից 2017թ. մարտի 1-ի որոշումով հայտարարված «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017» ծածկագրով ընթացակարգի 1-ից 7-րդ չափաբաժիններում նշված ապրանքների հատկանիշների հետ և դրանք հանդիսանում են ֆրանսիական Անիոս ֆիրմայի կողմից արտադրված ապրանքների հատկանիշները:

Ընկերությունը նշել է, որ 2017թ. ապրիլի 5-ին բողոքարկել է «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017» ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ից 7-րդ չափաբաժինները՝ նշելով, որ գնման առարկաների տեխնիկական բնութագրերը խտրական հիմունքներով են կազմված, որոնք չհիմնավորված խոչընդոտներ են առաջացնում և մրցակցության համար հավասար պայմաններ չեն ապահովում, որի արդյունքում Գնումների բողոքարկման խորհուրդը 21.04.2017թ. թիվ ԳԲԽ-42/17 որոշմամբ բավարարել է Ընկերության բողոքը և նշված որոշման հիման վրա «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ընթացակարգի 1-ից 7-րդ չափաբաժինները հայտարարվել է չկայացած:

Ընկերությունը նշել է նաև, որ «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017» ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ից 7-րդ չափաբաժիններով գնման ենթակա առարկաների բնութագրերը կազմվել են հիմք ընդունելով ախտանիչ միջոցներ արտադրող ֆրանսիական «Անիոս» ֆիրմայի բրենդային անվանումներ ունեցող կոնկրետ արտադրանքները բնութագրող այնպիսի կոնկրետ տոկոսներ, կշռաչափեր, ծավալի և ազդող նյութերի այնպիսի թվեր, որոնք պատկանում են միայն ու միայն կոնկրետ այդ արտադրողի՝ տվյալ բրենդային անվանումներով ախտահանիչ միջոցներին, չեն հանդիպում ոչ մի այլ արտադրողի համանման և համարժեք ախտահանիչ միջոցների մոտ, ինչն ապացուցվել է ԳԲԽ-42/17

բողոքի քննարկման ժամանակ և հիմք է հանդիսացել Ընկերության ներկայացրած բողոքի բավարարման համար:

Խորհրդում տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը պնդեց Պատվիրատուի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հայտնեց, որ «ԳՀԱՊՁԲ-2017/15-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի անվանումները և տեխնիկական բնութագրերը չեն պարունակում որևէ հղում առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, ինչի հետևանքով և չի կիրառվել «կամ համարժեք» արտահայտությունը:

Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց նաև, որ ընթացակարգի որոշ գնման առարկաների տեխնիկական բնութագրերում ապրանքների որակական ցուցանիշները լրացուցիչ բնութագրելու համար պահանջվել է համապատասխան արտոնագրերի առկայություն, և Պատվիրատուն գտնում է, որ քանի որ անհնար է գնման առարկաների բնութագրումն առանց դրանց, համապատասխան արտոնագրերի համար կիրառվել է «կամ համարժեք» արտահայտությունը, որը պարզ երևում է, որ կիրառելի է միայն պահանջվող արտոնագրերի մասով:

Միաժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հարկ համարեց նշել, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից «ՇՀԱՊՁԲ-15/15-2-2017» ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ից 7-րդ չափաբաժինների վերաբերյալ ներկայացված բողոքում բացի ներկայացված հայտարարությունից այն մասին, որ գնման ենթակա առարկաների բնութագրերը կազմվել են հիմք ընդունելով ախտանիչ միջոցներ արտադրող ֆրանսիական «Անիոս» ֆիրմայի բրենդային անվանումներ ունեցող կոնկրետ արտադրանքները բնութագրող այնպիսի կոնկրետ տոկոսներ, կշռաչափեր, ծավալի և ազդող նյութերի այնպիսի թվեր, որոնք պատկանում են միայն ու միայն կոնկրետ այդ արտադրողի՝ տվյալ բրենդային անվանումներով ախտահանիչ միջոցներին և չեն հանդիպում ոչ մի այլ արտադրողի համանման և համարժեք ախտահանիչ միջոցների մոտ, չի ներկայացրել նշված հայտարարությունը հիմնավորող որևէ ապացույց:

Պատվիրատուի ներկայացուցիչը հավելեց նաև, որ նմանատիպ ապացույցը բացակայում է նաև ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-42/17 որոշման մեջ:

Գնումների բողոքարկման խորհուրդը ԳԲԽ-42/17 որոշման 5-րդ՝ «Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը» բաժնում արձանագրել է հետևյալը.

««Հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված ախտահանիչ միջոցների ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդաբանական հրահանգների ուսումնասիրությունից երևում է, որ ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված են ախտահանիչ միջոցների հատկանիշները բնութագրող այնպիսի կոնկրետ տոկոսներ, կշռաչափեր, ծավալի և ազդող նյութերի այնպիսի թվեր, որոնք պատկանում են ֆրանսիական «Անիոս» ֆիրմայի բրենդային անվանումներ ունեցող ախտահանիչ միջոցներին:»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:
- 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

- 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

• 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Խորհուրդն արձանագրում է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 13.07.2017թ. ներկայացված բողոքով, ինչպես նաև Գնումների բողոքարկման խորհրդի 21.04.2016թ. թիվ ԳԲԽ-42/17 որոշմամբ չի հիմնավորվել և չի ապացուցվել այն հանգամանքը, որ նշված գնման ենթակա ապրանքների հատկանիշները պատկանում են միայն ու միայն կոնկրետ ֆրանսիական «Անիոս» ֆիրմայի բրենդային անվանումներ ունեցող ախտահանիչ միջոցներին և դրանք չեն հանդիպում ոչ մի այլ արտադրողի համանման և համարժեք ախտահանիչ միջոցների մոտ:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 13.07.2017թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ